


ԻՐԵՆ-Ի ԲԱՏՈՒՏԱՆ

Քաղից ել բարձմանից
Հ. ԱԼԱԲԱՐՅԱՆ

9147.925

Դ. - 14





19 AUG 2006

8382

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
2011-08

№ 2 ИЗВЕСТИЯ ИНОСТРАНЦЕВ ОБ АРМЯНАХ № 2
АРАБСКИЕ ИСТОЧНИКИ

№ 2 ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

9(47925)

հ-14

ԿԿ

ИБН-И БАТУТА

ԻԲՆ-Ի ԲԱՏՈՒՏԱ

Перевод и комментарии
Р. АЧАРЯНА

Քաղեց և քարգմանց
Հ. ԱՃԱՌՅԱՆ

ИЗДАТЕЛЬСТВО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
ЕРЕВАН—1940

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1940

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԾԵՐ

Աբու Աբղալլահ Մուհամմեդ-բին Աբղալլահ-բին Մուհամմեդ-բին Իբրահիմ Էլվաթի կտտանջի, անվանյալն Իբրահիմ Բատուտա կամ Շէմսէդդին արաբ ճանապարհորդը ծնվել է Tanger քաղաքում, 1304 թվին: 1325 թվին նա գուրս է եկել իր հայրենի քաղաքից՝ Մեքքա որբազան քաղաքը ուխտի գնալու համար: Այս առթիվ այցելել է Մարոկը, Ալժիրը, Թունիսը, Տրիպոլին, Եգիպտոսը, Ասորիքը և Արաբկան ծոցը կամ Բարային Արարիան: Այսուհետև անցել է Պարսկաստան, Իրակ, Միջագետք, Փոքր-Ասիա, Խիչաղի երկարությամբ (հարավային Ռուսաստան), Պոլիս, Բուխարա, Աֆղանիքը (հարավային Մուհամմադան), Պոլիս, Բուխարա, Աֆղանիստան, Հնդկաստան, Մալիկյան կղզիները, Յելլոն, Հնդկան Արշիակադուր և Զինաստան: Այս ահազին ճամբոր-կական Արշիակադուր և Զինաստան: Այս ահազին ճամբոր-կական Արշիակադուր և Զինաստան: Այս ահազին ճամբոր-կական Արշիակադուր և Զինաստան:

իր ճամբորդությունը նա պատմում է սր Ըստակառ աշխատության մեջ, որ ինքը անձամբ թիւղորել է իրն-ի ջուղի անուն քարտուղարին:

Զուրկի անուն քարտուղարին:

Իբրև Բատուտայի աշխատությունը քանիցս անգամ
տպված է Եվրոպայում. լավագույն հրատարակությունը
կատարեց Ասիական ընկերությունը, Պարիս 1853, Defré-
mery և Sanguinetti անուն արևելագետների աշխատու-
թյամբ, արաբերեն բնագրով և ստորադիր Գրանսերեն
թարգմանությամբ, չորս հատոր (2000 էջ): Անունների
ցանկը հրատարակվեց 1922 թ. Պարիս:

Մենք գործածել ենք վերոհիշյալ հրատարակությունը:



970

41

و في الحديث الصحيح ان رسول الله صلعم وصل ليله
الاسر آء الى سدرة المتسى فاذا فى اصلها اربعه انهار نهران
ظاهران و نهران باطنان فسال عنها جبريل عليه السلام فقال
اما الباطنان ففى الجنة و اما الظاهران فالنيل و الفرات و
في الحديث ايضا ان النيل و الفرات و سيحان و جيحان

كل من انهار الجنة

و النيل احد انهار الدنيا الخمسة الكبار وهى النيل و
الفرات و الدجلة و سيحون و جيحون

ذكر بعض فضلاء القدس... و منهم الشيخ الصالح
العبد ابو عبدالرحيم عبد الرحمن بن مصطفى من اهل
ارزروم و هو من تلامذة تاج الدين الرفاعي

Ճշմարիտ ավանդության (հազիսի) մեջ կարդամ ենք
թե Աստուծո Առաքյալը (Մուհամմեդ) (Աստուծո օքնու-
թյունը իր վրա թող լինի) իր գիշերային ճամբորդության
միջոցին հասավ մինչև վերջին ծայրի (սահմանի) lotus-ը¹)
և նրա արմատին տեսավ չորս գետ. երկու գետ ներքին և
երկու գետ արտաքին: Այս մասին հարցրեց Գաբրիելին
(հրեշտակապետին) և նա պատասխանեց. «Երկու ներքին-
ները հոսում են զրախտի մեջ, իսկ երկու արտաքինները
(որ հոսում են դրախտից դուրս) են Նեղոսը և Եփրատը»:
Եւ հազիսի մեջ կա նաև որ Նեղոսը, Եփրատը, Սիհոնը և
Զիհանը, բոլորն էլ զրախտի գետերիցն են²):

Ա. էջ 77—78

Նեղոսը աշխարհի հինգ մեծագույն գետերից մեկն է,
սրանք են՝ Նեղոսը, Եփրատը, Տիգրիսը, Սիհոնը և Զիհան-
նը:

Ա. էջ 79

Հիշատակություն Երուսաղեմի մի քանի նշանավոր
մարդկանց... Նրանցից է արդար և բարեպաշտ շեյխն Աբու
Աբդառուահիմ Աբդառուահման՝ որդի Մուստաֆայի, Աբգու-
մի բնակիչներից և նա էր Թաջէղզին կրրիֆայիի աշ-
կերտներից³):

Ա. էջ 125—6

ثم سافرت الى حصن بغراس (و ضبط اسمه باء
موحدة مضمومة و غين معجمة مسكونة و راء و
آخره سين مهملاً) و هو حصن منيع لا يرام عليه
البساتين والمزارع و منه يدخل الى بلاد سيس وهى
بلاد كفار الارمن و هم رعية لملك الناصر بؤدون اليه
مالا و دراهمهم فضة خالصة تعرف بالبغليه و بها تصنع
الثياب الديزية

و امير هذا الحصن صارم الدين ابن الشيباني وله ولد
فاصل اسمه علاء الدين و ابن اخ اسمه حسام الدين
فاضل كريم يسكن الموضع المعروف بالرصص بضم
الراء و الصاد المهمل الاول و يحفظ الطريق الى بلاد
الارمن حكايه شكي الارمن مررة الى الملك الناصر
بامير حسام الدين و زوجها عليه امور الاتيق فنفذ امره
لامير الامر آ بحلب ان يخنقه فلما توجه الامر بلغ ذلك
صديقا له من كبار الامراء فدخل على الملك الناصر و

Այսուհետև ճանապարհեցի ղեղի Բուզբաս (Pigræ)
բերդը. (այս անունը կարգացվում է թ բաղաձայնով և հա-
ջորդ ու ձայնավորով և դ բաղաձայնով՝ առանց ձայնավորի
և թու և վերջում ու բաղաձայնով): Բերդը ամուր և անառիկ
է: Նրա մուս կան պարտեղներ և արտեր: Այդ տեղից մտնում
են Սսի երկիրը, այն է քաֆիր հայերի երկիրը: Նրանք Մա-
լիք-ալ-Նասիրին հպատակ են և նրան հարկ են տալիս):
Նրանց դրամները մաքուր արծաթ են և կոչվում են բաղիլլայ (այլ ԶԶ
Տիգիլլայ (այլ ԶԶ Տիգիլլայ): Նրանց մոտ շինվում են դաբիգիլլա:

Պատմություն.—Մի անգամ հայերը գանգատվեցին
Մալիք-էլ-Նասիրին՝ Էմիր Հուսամ-էդ-դինի ղեմ և զրպար-
տեցին նրան՝ անվայել զործերի մեջ: Թագավորը հրաման
տվեց՝ Հալեբի Էմիրների Էմիրին՝ խեղդաման անել նրան:
Երբ հրամանն արձակվեց, նրա բարեկամ մեծ էմիրներից
մեկը իմացավ և մտնելով Մալիք-էլ-Նասիրի մոտ, ասաց.

قال ياخوند ان الامير حسام الدين هو من خيار الامراء
 ينصح المسلمين ويحفظ الطريق وهو من الشجعان و
 الارمن يريدون الفساد في بلاد المسلمين فيمنعهم ويقهر
 هم وانما ارادوا اضعاف شوكة المسلمين بقتله و لم
 ينزل به حتى اندى امرا ثانيا بسراحه والخلع عليه و
 رده لموضعيه و دعا الملك الناصر يريد يا يعرف بالاقوش
 و كان لا يبعث الا في مهمهم و امره بالاسراع والجد
 في السير فسار من مصر الى حلب في خمس و هي مسيرة
 شهر فوجد امير حلب قد احضر حسام الدين و اخرجه
 الى الموضع الذي يخنق به الناس فخلصه الله تعالى و
 عاد الى موضعه

5

و لم احضر تلك الليلة لاكتني رأيت بمدرسه الصياف ثلاثة
 من الرجال احدهم من ارض الروم والثاني من اصبهان
 و الثالث من خراسان و هم مقعدون فاستخبرتهم عن

«اپ կ տէր, իմիր Հուսամ-էղ-դինը արդարեւ լավագույն
 էմիրներից է. խրատում է մուսլիմաններին, պահպանում է
 մանապարհը և քաջ է. հայերն ուզում են մուսլիմանների
 երկրին վասել, նա նրանց արգելում է և նվաճում. զրա
 համար ուզում են նրան սպանել տալով մուսլիմանների
 փառքը նսեմացնելոց: Եւ չգաղարեց մինչեւ ձեռք բերեց մի
 երկրորդ հրաման՝ արձակելու նրան, խալաթով պատվելու և
 իր պաշտոնատեղին վերադարձնելու: Մելիք-էլ-Նասիրը
 կանչեց մի սուրհանդակ՝ էլակուշ անունով), նրան ուզար-
 կում էին միմիան կարելորագույն դիպլոմատիկա: Հրամայեց
 նրան արագացնել իր լոնթացքը: Նա գնաց կահիրեց մինչեւ
 չալար 5 օրից, որ մի ամսվա ճանապարհ է: Նա գտավ
 չալարի էմիրին՝ որ արգեն կանչել էր Հուսամ-էղ-դինին
 և դուրս էր բերել այնտեղ, ուր խեղդամահ են անում
 մարգկանց: Բարձրյալն Աստված փրկեց նրան և վերադար-
 ձավ իր պաշտոնատեղին⁹»:

Ա. էջ 163—5

5

[Պատմում է թե Նաջաֆի Մաշադ-Ալի քաղաքում Ալիի
 գերեզմանի վրա անդամալույժները բժշկվուն են Ռաջա-
 պատի 27-ի գիշերը: Դրա համար իրանի, Խորասանի, Պարս-
 կաստանի և Ռումի (الروم) երկրեց անդամալույժները հա-
 վաքվում են այսակ: Եւ ավելացնում է՝]
 Ես ներկա չեղա այդ գիշերը. բայց տեսա հյուրանո-
 ցում երեք հոգի, որոնցից մեկը Արզրումից, երկրորդը
 Սպահանից և երրորդը Խորասանից. նրանք անդամալույժ

شانهم فأخبروني انهم لم يدر كوا ليلة المحيـا و انهم
منتظرون او انها من عام آخر و هاذـه الليلـه

6

الامير سويته امير دياربكر

7

ذكر المتغلبين على الملك بعد موت السلطان ابى سعيد
فمنهم الشـيخ حـسن ابن عـمته الـذى ذـكرناه آنـفـاً تـغلـب
على عـراق العـرب جـمـيـعـاً و منـهـم اـبرـاهـيم شـاهـ ابنـ الـامـير
سـينـيـته تـغلـبـ علىـ المـوـصـلـ وـ دـيـارـبـكـرـ

8

وـ كانـ قدـ بـقـىـ لـأـوانـ سـفـرـ الرـكـبـ اـزـيدـ منـ شـهـرـيـنـ فـظـهـرـلـىـ
أـنـ أـسـافـرـ إـلـىـ المـوـصـلـ وـ دـيـارـبـكـرـ لـاـشـاهـدـ تـلـكـ الـبـلـادـ

9

وـ فـيـ العـاـشـرـ وـصـلـنـاـ إـلـىـ مـدـيـنـةـ العـلـاـيـاـ وـ هـىـ اـولـ بـلـادـ

էـիـնـ: Եـսـ հـա~ը~ը~ր~իـ ի~ր~ա~ն~ց~ վ~ի~ճ~ա~կ~ի~ մ~ա~ս~ի~ն~ և~ ի~ն~ձ~ հ~ա~յ~ա~ն~ե~ց~ի~ն~
թ~ե~ ի~ր~ե~ն~ք~ չ~ի~ն~ հ~ա~ս~ե~լ~ կ~ե~ն~ա~ց~ գ~ի~շ~ե~ր~ի~ն~ և~ թ~ե~ ս~պ~ա~ս~ո~ւ~մ~ ե~ն~
դ~ր~ա~ հ~ա~մ~ա~ր~ մ~յ~ո~ւ~ս~ տ~ա~ր~վ~ա~ ն~ո~ւ~յ~ն~ օ~ր~վ~ա~ն~:

Ա. էջ 418

6

[ի~ր~ա~կ~ի~ թ~ա~գ~ա~վ~ո~ր~ Ա~բ~ո~ւ~Ս~ա~յ~ի~դ~ի~ մ~ե~ր~ձ~ա~վ~ո~ր~ն~ի~ր~ի~ մ~ե~ջ~
հ~ի~շ~ո~ւ~մ~ է~]՝
կ~մ~ի~ր~ Ս~ո~ւ~վ~ա~յ~թ~ա~՝ Դ~ի~ա~ր~բ~ե~ք~ի~ր~ի~ է~մ~ի~ր~ւ~
Բ. էջ 33

7

Հ~ի~շ~ա~տ~ա~կ~ո~ւ~թ~յ~ո~ւ~ն~ ն~ր~ա~ն~ց~՝ ո~ր~ տ~ի~ր~ե~ց~ի~ն~ պ~ե~տ~ո~ւ~թ~յ~ա~ն~,
Ս~ո~ւ~լ~թ~ա~ն~ Ա~բ~ո~ւ~Ս~ա~յ~ի~դ~ի~ մ~ա~հ~ի~ց~ հ~ե~տ~ո~: ն~ր~ա~ն~ց~ի~ց~ 1) Շ~ե~յ~ի~
Հ~ա~ս~ա~ն~, ն~ր~ա~ (Ս~ա~լ~թ~ա~ն~ի) հ~ո~ր~ա~ք~ե~ո~ո~ր~դ~ի~ն~, ո~ր~ հ~ի~շ~ե~ց~ի~ն~ք~, տ~ի~
ր~ե~ց~ ա~մ~բ~ո~ղ~ ի~ր~ա~կ~ Ա~ր~ա~ր~ի~ վ~ր~ա~. ն~ր~ա~ն~ց~ի~ց~ 2) Ի~ր~ր~ա~հ~ի~մ~Շ~ա~հ~,
է~մ~ի~ր~ Ս~ո~ւ~ն~ի~թ~ա~յ~ի~ ո~ր~դ~ի~ն~, տ~ի~ր~ե~ց~ Մ~ո~ւ~ս~ո~ւ~լ~ի~ և~ Դ~ի~ա~ր~բ~ե~ք~ի~ր~ի~
վ~ր~ա~:

Բ. էջ 123—4

8

Ե~ր~կ~ո~ւ~ ա~մ~ս~ի~ց~ ա~վ~ե~լ~ է~ր~ մ~ն~ո~ւ~մ~ մ~ի~ն~չ~ե~ կ~ա~ր~ա~վ~ա~ն~ի~ մ~ե~կ~
ն~ե~լ~ո~ւ~ ժ~ա~մ~ա~ն~ա~կ~ը~, ո~ւ~ս~տ~ի~ հ~ա~ր~մ~ա~ր~ թ~վ~ե~ց~ա~վ~ ի~ն~ձ~ հ~ա~ն~ա~պ~ա~ր~
հ~ո~ր~դ~ե~լ~ մ~ի~ն~չ~ե~ Մ~ո~ւ~ս~ո~ւ~լ~ և~ Դ~ի~ա~ր~բ~ե~ք~ի~ր~, տ~ե~մ~ն~ե~լ~ո~ւ~ հ~ա~մ~ա~ր~ ա~յ~ս~
ի~ր~կ~ի~ր~ը~: [Ա~պ~ա~ զ~ն~ո~ւ~մ~ է~ մ~ի~ն~չ~ե~ Մ~ծ~ր~ի~ն~ և~ Մ~ե~ր~դ~ի~ն~, բ~ա~յ~ց~ չ~ի~
ա~ն~ց~ն~ո~ւ~մ~ Տ~ի~գ~ր~ա~ն~ա~կ~ե~ր~ո~ւ~]:

Բ. էջ 131

9

Տ~ա~մ~ն~ե~ր~ո~ր~դ~ օ~ր~ հ~ա~ս~ա~ն~ք~ Ա~լ~ա~յ~ա~ ք~ա~ղ~ա~ք~ը~, ա~յ~ս~ է~ Ռ~ո~ւ~մ~

الروم و هذا الاقليم المعروف ببلاد الروم من احسن
 اقاليم الدنيا و قد جمع الله فيه ما تفرق من المحسن
 في البلاد فاهله اجمل الناس صوراً و انظفهم ملابس و
 اطيفهم مطاعم و اكثـر خلق الله شفقة و لذلك يقال
 البركة في الشام و الشفقة في الروم انما عنـى به اهل
 هذه البلاد و كـنا متـى نزلنا بهذه البلاد زاوية او داراً
 يتقدـد احـوالنا جـيرانـا من الرجال و النساء و هـن لا
 يـحتجـبن فـاذا سـافـرـنا عـنـهـم و دـعـونـا كـانـهـم اـقـارـبـنا و اـهـلـنا
 و تـرى النساء باـكـيـات لـفـرـاقـنا مـتـاسـفـات و مـن عـادـتـهـم
 بتـلكـالـبـلـاد ان يـخـبـزـوا الخـبـزـ فى يـوـمـ وـاحـدـ منـالـجـمـعـةـ
 يـعـدـونـ فىـهـ ماـيـقـوـتـهـمـ سـائـرـهـاـ فـكـانـ رـجـالـهـمـ يـاتـونـ إـلـيـنـاـ
 بـالـخـبـزـ الـحـارـ فىـ يـوـمـ خـبـزـهـ وـ معـهـ الـاـدـامـ الـطـيـبـ اـطـرـافـاـ
 لـنـاـ بـذـالـكـ وـ يـقـولـونـ لـنـاـ انـ النـسـاءـ بـعـشـنـ هـذـاـ الـيـكـمـ وـ
 هـنـ يـطـلـبـنـ مـنـكـمـ الدـعـاءـ وـ جـمـيعـ اـهـلـ هـذـهـ الـبـلـادـ عـلـىـ
 مـذـهـبـ الـاـمـامـ اـبـيـ حـنـيفـهـ رـضـهـ مـقـيـمـينـ عـلـىـ السـنـةـ لـاـ

երկրի սկիզբը: Այս երկիրը, որ հայտնի է մուսի երկիր
 տեսանալ, աշխարհի գեղեցկագույն երկերներից մեկն է:
 Աստված նրա մեջ է հավաքել այն բոլոր գեղեցկությունները,
 որ ցըվել է ուրիշ երկերներում: Նրա բնակիչները
 մարդկանց ամենագեղեցկիներն են դեմքով, հագուստները
 ամենամաքուր և ուտելիքները ամենաընտեր: Աստուծու
 ամենագիտառատ արարածներն են: Դրա համար ել ասում
 են: «Օրհնությունը Սիրիայում, գթությունը Ռումում»:
 Սրանով հասկանալ են այս երկրի բնակիչները:

Երբ իջևանում էինք այս երկրում մի վանքի կամ մի
 տան մեջ, մեր հարևանները՝ այլ ու կին, հոգ էին տանում
 մեր վիճակի մասին: Կանայք քողարկված չէին: Երբ մեր
 նում էինք նրանցից, հրաժեշտ էին տալիս մեզ՝ իբրև մեր
 աղջականները և ընտանիները. տեսնում են կանայք լաց
 էին լինում մեր բաժանման առթիվ և տիրում: Այդ երկրի
 սովորություններից մեկն ել այն է, որ հացը եփում են
 շաբաթը մի անգամ և այդ օրը պատրաստում են վորքան
 որ պետք է տմրազ օսբարփա համար: Հաց եփելու օրը
 մարդիկ գալիս էին մեզ մոտ, բերելով տաք հաց և նրա հետ
 ընտիր ուտելիքներ, որ նվիրում էին մեզ: Մեղ ասում էին,
 թե կանայք են ուղարկել ձեզ սրանք և ձեզանից խնդրում
 են ձեր աղոթքը: Այս երկրի բոլոր բնակիչները իմամ Արու

قدري فيهم و لا رافضي و لا معتزلي و لا خارجي
و لا مبتدع و تلك فضيله خصمهم الله تعالى بها الا انهم
ياكلون الحشيش و لا يعيرون ذلك و مدينة العلايا
التي ذكرناها كبيرة على ساحل البحر يكنها التركمان
و ينزلها تجار مصر و اسكندرية و الشام و هي
كثيره الخشب و منها يحمل الى اسكندرية و دمياط
و يحمل منها الىسائر بلاد مصر و لها قلعة باعلاها
عجبية منيعة بناها السلطان المعظم علاء الدين الرومي
و لقيت بهذه المدينة قاضيها جلال الدين الارزنجاني

و صعد معى الى القلعة يوم الجمعة فصلينا بها و
اضافى و اكرمنى و اضافى ايضاً بها شمس الدين بن
الرجيحانى الذى توفي ابوه علاء الدين بمالي من بلاد

السودان

ذكر سلطان العلايا

و فى يوم السبت ركب معى القاضى جلال الدين و

خانى فواجى قاپانىلىخامى بىن (Աստված թող գոհ լինի
նրանից) և հաստատ են սուննաթում. չկա նրանց մեջ ոչ
կաղարի, ոչ ութիզի, ոչ մութաղիլի, ոչ խարիջի և ոչ
մուրթատի: Աստված բարձրյալն պարգևել է այս շնորհը
նրանց: Միայն թե նրանք ծխում են հաշիշ և չեն խորշում
նրանից:

Ալայա քաղաքը, որ հիշեցինք, մեծ է, ծովի եղերքում.
բնակիչները թուրքման են. այնտեղ են իջնում կահիրեի,
Ալեքսանդրիայի և Ասորիքի վաճառականները. հարուստ է
փայտով, որ այնտեղից տանում են Ալեքսանդրիա և Դամիաթ,
և այնտեղից ել տանում են Եգիպտոսի մյուս քաղաքները:
Նրա մեջ կա մի բերդ, բաղտի ամենաբարձր տեղում, հրա-
շալի և ամուր, որ կառուցել է մեծ Սուլթան Ալաեդդին Առ-
ուումի: Այցելեցի այս քաղաքում՝ նրա դադի Զալալ-էդ-
դին երկնկացուն. ինձ հետ բարձրացավ բերդը, ուրբաթ
օր, աղոթեցինք այնտեղ, պատվեց ինձ և մեծարեց: Ինձ
մեծարեց նաև Շամս էդ-դին, որդի Առուաջիհանիի, որի հայ-
րը՝ Ալաեդդին մեռավ Մալի քաղաքում, Սուլդանի երկրում:

940
44

Հիւատակաւրյան Ալայաի Սուլթանի

Շաբաթ օրը, Ճի հեծավ ինձ հետ՝ զադի Զալալ-էդ-դի-
նը և գնացինք այցելելու Ալայայի թագավորին, որ է Յու-



توجهنا الى لقاء ملك العاليا و هو يوسف بك و معنى
 بك الملك ابن قرمان يفتح القاف و الراء و مسكنه
 على عشرة اميال من المدينة فوجدناه قاعداً على الساحل
 وحده فوق رايه هنالك و الامراء و الوزراء اسفل منه
 و الاجناد عن يمينه و يساره و هو نحضوب الشعر
 بالسوداد فسلمت عليه و سالني عن مقدمي فأخبرته عما
 سأله و انصرفت عنه و بعث الى احساناً و سافرت من
 هنالك الى مدنه انطاليه و ضبط اسمها بفتح الميم و
 اسكان النون و فتح الطاء المهملا و الف و لام
 مكسور و ياء آخر الحروف و اما التي بالشام هي
 انطا كيه على وزنها الا ان الكاف عوض عن اللام
 و هي من احسن المدن متناهيه في اتساع الساحه و
 الضخامة اجمل ما يرى من البلاد و اكثره عماره و
 احسنه ترتيباً وكل فرقه من سكانها منفردة بانفسها
 عن الفرقه الاخرى فتجار النصارى ما كثون منها بالموضع

սուրբ բեկ (բեկ նշանակում է թագավոր), որդի Կարամանի
 (կափը և ուսն ունին ֆաթհա): Նրա բնակարանը քաղաքից
 տասը մղոն հեռու էր: Մենք նրան գտանք նստած, ծովեղ-
 ըի վրա, մինակ, այստեղի մի բլուրի բարձունքում: Էմիր-
 ները և վեզիրները նրանից ցածրումն էին. ղինվորները
 նրա աջից ու ձախից: Նա ուներ սև մազեր: Ողջունեցի:
 նրան և նա ինձ հարցրեց իմ գալուստի մասին. տեղեկու-
 թյուն տվի իր հարցը մասին և հրաժեղտ առի նրանից:
 Ինձ մի նվեր ուղարկեց:

Այստեղից ճամբար ընկա Անթալիա քաղաքը: (Նրա
 անունը կարդացվում է համգան ֆաթհայով, նույնը սուքու-
 նով, կոլոր թան ֆաթհայով, և ալիք, և լամը քասրայով և
 տառերի վերջին յա: Ստկայն այն, որ Միրիայումն է, այն
 է Անթալիա, նույն ձեւ ունի, միայն թե լամի տեղ ունի
 կաֆ): Ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է. ընդարձակու-
 թյամբ և մեծությամբ հավասարվում և ամենաբազմաբարդ
 և ամենագեղեցիկ կառուցված քաղաքներին: Բնակիչների
 ամեն մի կարգը բոլորովին անջատված է մյուս կարգերից:

المعروف بالميناء و عليهم سور تسد ابوابه عليهم ليلاً
 و عند صلاة الجمعة و الروم الذين كانوا اهلها قدماً
 ساكنون بموضع اخر منفردين به و عليهم ايضاً
 سور و اليهود في موضع آخر و عليهم سور و الملك
 و اهل دولته و ممالكة يسكنون ببلدة عليها ايضاً
 سور يحيط بها و يفرق بينها وبين ما ذكرناه من
 الفرق و سائر الناس من المسلمين يسكنون المدينة
 العظمى و بها مسجد جامع و مدرسة و حمامات كثيرة
 و اسواق ضخمة مرتبة بابد ع ترتيب و عليهما سور
 عظيم يحيط بها و بجميع المواقع التي ذكرناها و
 فيها البيساتين الكثيرة و القواكه الطيبة و المشمش
 العجيب المسمى عندهم بقمر الدين و في نواته لوز
 حلو و هو يبس و يحمل الى ديار مصر و هو بها
 مستطرف و فها عيون الماء الطيب العذب الشديد
 البرودة في ايام الصيف نزلنا من هذه المدينة بمدرستها
 و شيخها شهاب الدين الحموي و من عادتهم ان يقرأ

Քրիստոնյա վաճառականները բնակվում են մինչ (նավա-
 հանգիստ) կոչված վայրում, շրջապատված պարսպով, որի
 դռները փակվում են գիշերը և ուրբաթի աղոթքի ժամանակ:
 Հուները, որոնք բաղտի հին բնակիչներն են, բնակվում
 են մի ուրիշ տեղում, անջատված և նույնպես պարսպով
 պատճեն: Հրյաները ուրիշ տեղում և շրջապատված պարսպով:
 Թագավորը, պետական անձինք և իր ստրուկները բնակվում
 են մի քաղաք, նույնպես շրջապատված պարսպով, որ բա-
 ժանում է նրանց մեր հիշած մյուս կարգերից:

Մնացյալ խորած հասարակությունը բնակվում է մեծ
 քաղաքում, ուր կա մի ավագ մզկիթ, մի մագրասա, բազ-
 մաթիվ բաղանիսներ և մեծ շուկաներ, խիստ կարգավորված:
 Քաղաքը ունի մի մեծ պարիսպ, որ շրջապատում է այն և
 բոլոր այն տեղերը՝ որ հիշեցինք: Նրա մեջ կան շատ պար-
 տեղներ, ընտիր պտուղներ և սքանչելի ծիրան, որ նրանց
 մոտ կոչվում է կամար-էդ-ղին (կրոնի լուսին). Կորիզը
 քաղցր միջուկ ունի. այս ծիրանը չորացնում են և տանում
 եղիպտաս, ուր շատ հարգի է: Նրանում կան նաև ընտիր
 ջրի ակունքներ, քաղցր և ամառվա օրերին շատ սառն:

Այդ քաղաքում մենք իջևանեցինք մագրասայի մեջ,
 շերին էր Շիհաբ-էդ-ղին Ալիամազի: Իրենց սովորությունն

جماعة من الصبيان بالاصوات الحسان بعد العصر من كل يوم في المسجد الجامع وفي المدرسة ايضاً سورة الفتح و سورة الملك و سورة عم

10

ذكر سلطان اسطاليه

و سلطانها خضر بك بن يونس بك وجدناه عند وصلنا اليها عليلا فدخلنا عليه بداره و هو في فراش المرض فكلمنا بالطف كلام و احسنه و دعنه و بعث اليانا باحسان و سافرنا الى بلده بردور

11

ثم سافرنا الى مدينه سيواس و ضبط اسمها بكسر السين المهمel و يا مد و آخره سين مهمel وهي من بلاد ملك العراق واعظم ماله بهذا الاقليم من البلاد و بها منزل امر آله و عماله مدينه حسنـه العمارة واسعة

է، որ եբախաների խումբը կարգում է քաղցր ձայնով, հետինքից հետո, ամեն օր, մզկիթում, ինչպես և մազբասայում, դուռանի էլփաթէ և էլմուլք և ամմ կոչված սուրաները¹⁰):

Բ. էջ 255—260

10

Հիւտակություն Անքալիայի սուլթանի

Նրանց սուլթանն է Խիզը բեկը ուրդի Յունիս բեկի:
Երբ հասանք այնտեղ, մենք գտանք նրան հիվանդ. մտանք
նրա մոտ՝ իր պալատը և նա հիվանդության անկողնումն
էր: Նա խոսեց մեզ հետ շնորհալիք և գեղեցիկ խոսքերով:
Մենք հրաժեշտ տվինք նրան և մեզ ուղարկեց իր նվերները:
Ճանապարհ ընկանք գեպի բուրդուր քաղաքը:

Բ. էջ 265

11

Այնուհետև գնացինք Սիվաս քաղաքը¹¹) (այս անունը
կարդալ սին ու քեսրեռվ և երկար ի-ով և վերջը սին). սա
իրակի թագավորի քաղաքներից է և այս երկրում նրան
պատկանող քաղաքներից մեծագույնն է: Այստեղ են բնակ-
վում իր էմիրները և հարկահավաքները: Քաղաքն ունի

23

الشوارع اسواقها غاصه بالناس و بها دار مثل المدرسه
تسمى دار المسيادة لا ينزلها الا الشرفاء و نقيهم ساكن
بها و تجري لهم فيها مدة مقامهم المفرش و المطعم و
المشعـع و غيره فيزودون اذا انصرفوا

ولما قدمنا الى هذه المدينة خرج الى لقائنا اصحاب
الفتى اخي احمد بجوجى و بحق بالتركى السكين و
هذا منسوب اليه و الجيمان منه معقودان بينهما قاف
و باوه مكسوره و كانوا جماعه منهم الركبان و المشاه
ثم لقينا بعدهم اصحاب الفتى اخي جبى و هو من
كبار الاخيه و طبقته اعلى من طبقه اخي بجوجى
فطلبو ان ننزل عند هم فلم يمكن لي ذلك لسبق
الأولين و دخلنا المدينة معهم جميعاً و هم يتضاخرن
و الذين سبقو اليانا قد فرحوا اشد الفرح بنزولنا
عند هم ثم كان من صنيعهم فى الطعام و العمام و
المبيت مثل ضيع من تقدم و اقمنا عندهم ثلاثة فى
احسن ضيافه ثم اتنا الفاضى و جماعه من الطلبه و معهم

գեղեցիկ շենքեր, լայն փողոցներ, և նրա շուկաները լիքն են
մարգկանցով, Նրա մեջ կա մի տուն՝ նման զպրոցի և կոչ-
վում է դառ-տօ-սիլադար (իշխանության տուն): Այստեղ են
իջնում միայն շերիֆները (Մուհամմեդի ժառանգներ), այն-
տեղ է բնակիվում նրանց գլխավորը. և իրենց բնակության
միջոցին նրանց տրվում են անկողիններ, ուտեստ, մոմ և
շյլ բաններ. և երբ մեկնին, տրվում է նրանց ճամրի պա-
շար¹²⁾:

Երբ հասանք այս քաղաքը, մեզ գիմավորելու դուրս
եկան եղբայր Ահմադ բիչաքչի անուն երիտասարդի ընկեր-
ները (բիչաք թուրքերեն նշանակում է դանակ, իսկ սա նրա
ածանցն է, երկու ջրմի միջև կափ տառը կա և բ ունի քես-
րե), նրանք բազմաթիվ էին՝ ձիավոր և հետիոտն: Ապա
պատահեցինք եղբայր Զելերի երիտասարդի ընկերներին,
ինքը եղբայրության ավագներից է և իր կարգը ավելի
բարձր է քան եղբայր բիչաքչի կարգը: Նրանք հրավիրե-
ցին մեզ, որ իջեվանենք իրենց մոտ. իսկ սա անկարելի
եղավ ինձ համար, որովհետև նրանցից առաջ մյուսներն
էին հրավիրել: Մենք մտանք քաղաք՝ նրանց հետ խմբո-
վին. և նրանք պարձենում էին և նրանք որ առաջ էին
եկել մեզ մոտ, ուրախանում էին մեծ ուրախությամբ, որ
մենք իջնում էինք իրենց մոտ: Նրանք վարվեցին կերակրի,
բաղանիսի և իջևանի վերաբերմամբ այնպես՝ ինչպես նա-
խորդները: Նրանց մոտ մենք մնացինք երեք օր, ամենա-
լավ հյուրասիրության մեջ:

خيل الامير علاء الدين ارتنا نائب ملك العراق ببلاد
الروم فركبنا اليه و استقبلنا الامير الى دهليز داره
فسلم علينا و رحب و كان فصيح اللسان بالعربية و
سائلنى عن العراقيين و اصبهان و شيراز و كرمان و عن
السلطان اتابك و بلاد المشام و مصر و سلاطين التركمان
و كان مراده ان اشكر الامير منهم و اذم البخيل
فلم افعل ذلك بل شكرت الجميع فسر بذلك منى و
شكري عليه ثم احضر الطعام فاكلنا و قال تكنون
في ضيافتي فقال له الفتى اخي جلبي انهم لم ينزلوا
بعد بزاويتى فليكونوا عندى و ضيافتك تصلكم فقال
افعل فانتقلنا الى زاويته و اقمنا بها ستاً في ضيافته و
في ضيافة الامير ثم بعث الامير بفرس و كسوة و
درابهم و كتب لنوابه بالبلاد ان يضييفونا و يكرمونا و
يزودونا و سافرنا الى مدينة اماصية (و ضبط اسمها
بفتح الهمزة و الميم و الف و صاد مهمل مكسور و
يا آخر الحروف مفتوحة) مدينة كبيرة حسنة ذات

Սյնուհետև զաղին եկավ մեղ մոտ՝ մի խումբ աշակերտաներով, իրենց հետ էլ իրակի թագավորի Ծումի երկրում փոխանորդ էմիր Ալայէդղին Արթենայի ձիերը: Հեծանք ձիերը: Էմիրը դիմավորեց մեղ իր պալատի նախասենյակում և ողջունեց և բարի գալուստ մաղթեց. արաբերեն լավ էր խոսում. նա հարցափորձեց ինձ երկու իրակների, Սպահանի, Շիրազի, Քիրմանի, Սուլթան Աթաբեկի, Միրիայի, Եղիպատոսի և թուրքմեն սուլթանների մասին: Իր փափառն այն էր որ ես գովեի նրանցից վեհանձններին և պարսավելի ագահներին: Ես այդպես չարի: Այլ գովեցի ըստորին: Սրա համար նա ուրախացավ և գոհունակություն հայտնեց ինձ: Ապա ճաշ պատրաստեցին և կերանք: Ասաց. «Դուք ինձ հյուր կլինիք»: Երիտասարդ եղբայր Զելեբին պատասխանեց. «Դեռ նրանք իմ վանքը չեն իջեանել. թող մնան ինձ մոտ, իսկ ձեր ճաշը կարվի իրենց»: Ասաց. «Թող լինիք»: Մենք փոխադրվեցինք վանքը և մնացինք վեց օր՝ իբր իր հյուրը և էմիրի հյուրը: Ապա էմիրը ուղարկեց ձի, զգեստ և զրամուք գրեց իր փոխանորդներին քաղաքներում, որ հյուրամիրեն մեղ, պատվեն և պաշար տան:

Ու ճամբա լնկանք գեղի Ամասիա¹³) քաղաքը (կարտալ այս անունը համզան և միմը և էլիֆը փեթհայով, սադը քերեցնով և վերջին գիրը յա փեթհայով): Մեծ ու գեղեցիկ

انهار و بساتين و اشجار و فواكه كثيرة و على انهارها
النوعاير تسقى جناتها ودورها و هي فسيحة الشوارع
و الاسواق و ملوكها لصاحب العراق و بقرب منها

بلدة سونسى (و ضبط اسمها بضم السين المهمel و واو
مدّ و نون مضموم و سين مهمel مفتوح) و هى لصاحب
العراق و بها سكنى اولاد ولی الله تعالى ابى العباس
احمد الرفاعى منهم الشيخ عزالدين و هو آلان شيخ
الرواق و صاحب سجادة الرفاعى و اخوته الشيخ على و
الشيخ ابراهيم و الشيخ يحيى اولاد الشيخ احمد كوجك
(و معناه الصغير) ابن تاج الدين الرفاعى و نزلنا بزاويتهم
و رايـا لهم الفضل على من سواهم ثم سافرنا الى مدينة
كمش (و ضبط اسمها بضم الكاف و كسر الميم و
شين معجم) و هى من بلاد ملك العراق مدينة كبيرة
عاصـره باتيهـا التجار من العراق و الشام و بها معادن
الفضة و على مسيرة يومين منها جبال شامجه و عرة لم
اصل اليـا و نزلنا منها بزاويـه الاخـى مجد المـدين اقـمنـا

քաղաք է, ունի գետեր, պարտեզներ, ծառեր և շատ պը-
տուզներ: Գետերի վրա կան անիվսեր՝ պարտեզները ջրելու
և խմելու համար: Ունի լայն փողոցներ և շուկաներ: Իր
իշխողն է Իրակի թագավորը:

Նըա մոտ է Սունուսս քաղաքը. (այս անունը կար-
դալ սինն ու երկար վավը գամմայով, նունը դամմայով և
սինը ֆեթհայով): Սա նույնպես իրակի թագավորինն է:
Այստեղ են բնակվում բարձրյալն Աստուծո բարեկամի որ-
դիները՝ Արուել Արբաս Ահմադ Առուիփայի, նրանցից նաև
Շեյխ Իզզեդզինը, որ այժմ Առ-սիվաքի (le caravansérail)
շեյխը և Առուիփայի սաջջագայի (աղօքի օրգ) տերն է. և
նրա եղբայրները՝ Շեյխ Ալի, Շեյխ Իբրահիմ և Շեյխ Յան-
յա, որոնք որդիքն են Քուչուք Շեյխ Ահմադի (նշանակում
է փոքր), որ է որդի Թաջ-էդ-զին Առուիփայիի: Մենք իջանք
նրանց վանքը և տեսանք նրանց ավելի գերազանց բոլոր
ուրիշներից:

Ապա ճանապարհվեցինք Գումուշը քաղաքը¹⁴⁾ (կարդալ
այս անունը քափ դամմայով և միմն ու շինը քեսրեյով).
այս էլ Իրակի թագավորի քաղաքներից է: Սա մեծ ու շին
քաղաք է, ուր գալիս են վաճառականները իրակից և Շա-
մից, և ուր կան արծաթի հանքեր: Նրանից երկու օրվա
ճամբար հնոու կան բարձր և սեպ լիոններ, ուր ես չգնացի:

Մենք իցեւանեցինք այնտեղ, Մաջուեզդին եղբոր

بها ثلاثة في ضيافة و فعل افعال من قبله و جاء الينا
 نائب الامير ارتنا و بعث بضيافة و زاد و انصرفنا عن
 تلك البلاد فوصلنا الى ارزنجان (و ضبط اسمها بفتح
 المهمزة و اسكان الراء و فتح الزاي و سكون النون
 و جيم و الف و نون) و هي من بلاد صاحب العراق
 مدینه كبيرة عامره و اکثر سكانها الارمن و المسلمين
 يتكلمون بها بالتركية و لها اسواق حسنة الترتيب و يصنع
 بها ثياب حسان تنسب اليها و فيها مملدن الخامس و يصنعون
 منه الاواني و البالسين التي ذكرناها و هي شبه المنا و
 عندنا و نزلنا منها بزاويه الفتى اخي نظام الدين و هي
 من احسن الزوايا و هو ايضاً من خيار القيان و
 كبارهم اضافنا احسن ضيافة و انصرفنا الى مدینه
 ارزروم و هي من بلاد ملك العراق كبيرة الساحه
 خرب اکثرها بسبب فتنه و قعت بين طائفتين من
 التركمان بها و يشقها ثلاثة انهار في اکثر دورها

վանքը և մնացինք այստեղ երեք օր, հյուրընկալության
 մեջ: Նա էլ վարվեց մեզ հետ նախորդների նման: Մեզ մոտ
 եկավ էմիր Արթենայի տեղակալը և ուղարկեց հյուրընկա-
 լության և ճամբի պաշարի կերակաւեներ:

Մենք մեկնեցանք այս քաղաքից և հասանք Արգան-
 ջան (կարդալ այս բառը համգան ֆաթհայով և ըեն սուքու-
 նով և զան ֆաթհայով և նունը սուքունով և ջիմ և ալիֆ
 և նուն). սա էլ Իրակի թագավորի քաղաքներից է. մեծ ու
 շեն քաղաք է. նրա բնակիչներից մեծագույն մասը հայ է.
 Խուսումանները խոսում են թուրքերեն. այստեղ կան լավ
 կարգավորված շուկաներ. այստեղ շինում են գեղեցիկ կեր-
 պաններ, որ իր անունով են կոչվում: Նրա մեջ կան պղնձի
 հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուս»-ներ¹⁵),
 որ հիշեցինք. դրանք նման են մեր աշտանակներին:

Այստեղ մենք իջանք երիտասարդ եղբայր Նիզամ-
 էղբինի վանքը, որ գեղեցկագույն վանքերից է. ինքն էլ
 լավագույն և աղնվական երիտասարդներից է. նա մեզ
 ցույց տվից ամենալավ հյուրասիրություն:

Այստեղից գնացինք Արզրում¹⁶) քաղաքը, որ Իրակի
 թագավորի քաղաքներից է. շատ մեծ, բայց մեծ մասը
 ավերված, այն կովի պատճառով, որ ծագեց այստեղի երկու
 թուրքման ցեղերի միջև: Այստեղից են անցնում երեք գետ:

بساتين فيها الاشجار و الدرالي و نزلنا منها بزاويه الفتى
 اخي طومان و هو كبير السن يقال انه أناف على مایه
 و ثلاثين سنّه و رايته يتصرف على قدميه متوكلاً على
 عصاً ثابت الذهن مواظباً للصلاده في اوقاتها لم يذكر
 من نفسه شيئاً الا انه لا يستطيع الصوم خدمتنا بنفسه في
 الطعام و خدمتنا اولاده في الحمام و اردنا الانصراف عنه
 ثاني يوم نزلنا فشق عليه ذلك و ابى منه و قال ان
 فعلتم نقصتم حرمتى و انما اقل الضيافة ثلاث فاقمنا لديه
 ثلاثة

11

و كان بهذه المدينه من الصالحين الحاج ناصر من
 اهل دياربكر و سكانه بقىه من قباب الجامع دخلنا
 اليه و اكلنا من طعامه و اتفق له لما دخل القاضي
 جلال مدينه كنبائيه حين خلافه انه اتاه و ذكر للسلطان
 انه دعا له فهرب لثلا يقتل كما قتل الحيدري

32

տներից շատերում պարտեղներ կան և նրանց մեջ ծառեր և
 (խաղողի) որթեր¹⁷):

Մենք իջանք երիտասարդ-եղբայր¹⁸) Թումանի վանքը.
 շատ տարիքավոր մարդ եր. ասում են թե 130 տարեկանից
 ավելի է: Տեսա նրան՝ գնում գալիս էր ոտքով, հենված
 գավազանի վրա. հիշողությունը տեղը, կատարում էր
 աղոթքները իրենց ժամանակին և ոչ մի բանից չէր գան-
 գատվում իր անձի մասին, բացի այն՝ որ չէր կարողանում
 ծով պահել Ծառայեց մեզ անձամբ ճաշի ժամանակ, իսկ
 իր որդիները մեզ ծառայեցին բաղանխում:

Մենք ուղեցինք հրաժեշտ տալ իրեն՝ մեր իջևանելու
 երկրորդ օրը. նա դժգոհ մնաց սրանից և մերժեց. և ասաց.
 «Եթե այդ անեք, իմ պատիվը կնվաստացնեք, որովհետեւ
 հյուրընկալության ամենակարծ ժամանակը երեք օր է»:
 Մենք էլ երեք օր մնացինք մոտը:

Բ. էջ 289—295

[Ինչպիս հրատարակիչները, էջ 457 ծան. նկատում են,
 այստեղ պետք է բնագրից թերթ ընկած լինի. որովհետեւ
 ճանապարհորդը կարինից հանկարծ թոշում է Արշիպելագոս]:

11

Կար այս քաղաքում (Cambaie, Հնդկաստան), բա-
 րեպաշտներից մեկը, հաջի Նասիր, Դիարբեքիրի բնակիչ-
 ներից. նա բնակվում էր մզկիթի գմբեթներից մեկում: Մը-
 տանք նրա մոտ և հետը ճաշ արինք: Եւ եղավ որ, երբ
 դատավոր Զալալը, իր ապստամբության միջոցին մտավ
 Քինըրայա (Cambaie) քաղաքը, Նասիրը եկավ նրա մոտ.
 հայտնեցին Սուլթանին թե նա աղոթել է նրա համար. և
 նա փախավ որ չլինի թե սպանի նրան, ինչպիս սպանել էր
 Հայրարին:

Դ. էջ 57

33

Lotus անունով կան զանազան բույսեր։ Հնության մեջ հայտնի էր մի տեսակ lotus, որի պտուղը այնքան քաղցր էր, որ ուտողը մոռանում էր իր հայրենիքը։ Նշանավոր է նույնպես եգիպտական lotus-ը, որ կոչվում է նաև նեղասի օււեան կամ նաւնուֆա։ Արա բոլոր մասերը ուտելիին, ցողունի ծուծը չորացնելով և աղալով պատրաստում են ալյուր, որից ստացվում է հաց։ Արա հունդը Սիրիայի շուկաներում շատ հարգի է։

Երբայական Ա. Գրքի մեջ ավանդված է թե Աղամի զբախտից 4 գետ էր բղիում (Փիսոն, Գեհոն, Տիգրիս և Եփրատ)։ Ահա իր բառերը՝ Եղարի հայ թարգմանությամբ. «Եւ տնկեաց Աստուած զղբախտն յԵղեմ ընդ արեելս... Եւ գետ ելանէր յԵղեմայ ոռոգանել զդրախտն, և անտի բաժանի ի չորս առաջս։ Անուն միունն Փիսովն. նա է որ պատէ զամենայն երկիրն Եւիլատայ (=Երբ. Խավիլա), անդ ուր սուկին է, և ոսկի երկրին այնորիկ ազնիւ. և անդ է սուտակն և ակն զահանակ։ Եւ անուն գետոյն երկրորդի Գեհովն. նա պատէ զամենայն երկիրն Եթովպացւոց (=Երբ. Քուշայ)։ Եւ գետն երրորդ՝ Տիգրիս. նա է որ երթայ յանդիման (=Երբ. յարեելս) Ասորեստանի։ Եւ գետն չորրորդ Եփրատէս» (Ծն. Բ. 8—14)։

Եփրատ և Տիգրիս գետերը հանրածանոթ են: Շատ գիտուններ աշխատել են որոշել նաև Փիսոն և Գեհոն գետերի տեղը, որով և պիտի որոշվեր թե ուր է գտնվում երկրավոր երևակայական դրախտը: Շատեր այն կարծիքին են եղել թե դրախտը Հայաստանումն է եղել ըստ որում Փիսոն և Գեհոն համարվել են Արաքս և ձորոխ գետերը:

Մահմետականների հաղիսը ընդունել ե որ դրախտի գետերն են Նեղոսը, Եփրատը, Սիհանը և Զիհանը: Առաջին երկուսը հայտնի են. իսկ Սիհունը և Զիհունը Կիլիկիայի երկու մեծագույն գետերն են: Սիհունը (որ և Սիհան) հըների Սարոսն է. մի քանի ճյուղերով բխում է Տավրոսի լեռներից. ճյուղերից ամենից արևելյանը սկսվում է Հաճինի մոտերքից, իսկ ամենից արևմտյանը Կապաղովկիայից. բոլոր ճյուղերը միանում են Ատանայի ճյուսիսային կողմում և այդ քաղաքի միջով անցնելով թեքվում են դեպի հարավարևմուտք և թափում Միջերկրական ծովը:

Զիհունը (որ և Զիհան) հների Պիտուամիսն է. Սարոսից ավելի բազմաթիվ ճյուղերով բխում է Կիլիկիայի արեւելյան կողմերից. ճյուղերից մի քանիսը անցնում են Ալպիստանի, Զեյթունի, Մարաշի, Սիսի և Սնազարբայի մոտերով և բոլորը միացած՝ Մսիսի առաջից թեքվում են դեպի հարավ, այստեղ մի պտույտ են գործում և Այասից քեչ ցած՝ թափվում են Ալեքսանդրեակի ծոցը:

Այս հաշվով հաղիսի դրախտը չափազանց ընդարձակ տարածություն ունի. նա սկսվում է Հայաստանից և Կիլիկիայի վրայով գնում է մինչև Եգիպտոս: Բացի սրանից՝ ըստ հաղիսի՝ երկրավոր դրախտը նույն է երկնավոր դրախտի հետ:

3

Այս տեղեկությունից, ինչպես նաև § 5 տրված հիշատակությունից երևում է, որ ԺԴ դարում արար ընտեղություն կար Կարինում:

36

Ի՞նչ-ի Բատուտայի տեղեկությամբ արար ընտեղություն կար գարձյալ Երզնկայում (տես § 9, էջ 17), Դիարբեքիրում (տես § 11, էջ 33), որոնցից մեկը մինչև Հընդկաստան էր գնացել:

4

Որպինետև արարերեն գրության մեջ ձայնավոր տառաերը ընդհանրապես չեն նշանակվում, ուստի օտար և անծանոթ բառերի ընթերցումը անհնարին է լինում: Սրա առաջքն առնելու համար՝ արար հեղինակները, այդպիսի անսովոր բառեր և հատուկ անուններ գործածելու ժամանակ, նրանց կողքին տառ առ տառ որոշում են հնչյունները: Մեր հեղինակը այսպիս է վարպետ այստեղ Բալքրաս անվան հնչումը նշանակելու համար. նույնը հետո Խուսուս, Սիվաս, բիչաք, Ամասիա, Սունուսա, Ատալիա, Գումուշ և Սրգանջան բառերի համար:

Այս երևույթը գրեթե այն է՝ ինչ որ անգլիացոց մեջ spell է կոչվում:—Երբ անգլիացիք իրար հետ խոսելիս՝ բարբառի տարբերության պատճառով իրար չեն հասկանում, իսկույն ասում են spell (հեգի՛ք): Եւ խոսողը տալիս է անծանոթ բառի տառերի անունը. սրանով հասկանում են իրար:

Ֆրանսիացի թարգմանիչը՝ իր թարգմանության մեջ հապավել է ի՞նչ-ի Բատուտայի այս հեգումները: Հարազատության, միկնույն ժամանակ արարական այս հետաքրքիր սովորությունը ընթերցողներիս ծանոթացնելու համար, ես բոլոր այդ հեգումները պահեցի:

5

Մալիք-Նասիրը մեր պատմության մեջ հիշվում է Մելիք-Նազար անունով: Աս Եգիպտոսի սուլթանն է, որ Թաթարների և Թուրքմենների հետ միացած քանիցս ան-

37

գամ արշավեց Կիլիկիա՝ Մուբինյան պետությունը կործանելու նպատակով: Իբն-ի Բասուտայի ժամանակ, Մելիք-Նազար երեք անգամ արշավեց Կիլիկիա և մեծ ավերություններ գործելուց հետո՝ Լեռն Յ թագավորին հարկատու դարձեց (1335 – 37): Սրա համար է, որ Իբն-ի Բատուտա ասում է թե «Հայերը Մալիք-ալ-Նասիրին հպատակ են և նրան հարկ են տալիս»:

6

Բողլիյա բառը (որով կոչվել են Կիլիկիայի հայ թագավորների արծաթյա դրամները) չկա Կամուսի հոյակապ բառարանում. ուստի արարերեն չե. և արդյոք աղավաղված հայերեն բառ է:

7

Դարբիզիյա բառն էր, իր բոլոր տարբերակներով, չկա Կամուսի բառարանում. ուստի պետք է ենթադրել թե արարերեն չե, այլ աղավաղված հայերեն մի բառ:

8

Էլակուտ բառով պետք է հասկանալ Ակ-կուտ, որ է թրք. ազ զաշ «սպիտակ թռչուն»:

9

Էմիր Հուսամ-էղ-դինի այս դեպքը, իրբ Եգիպտոսի սուլթանը անմիջապես ընդունեց հայերի դանդատը և հրամայեց խեղդել իր նշանագոր էմիրին, ցույց է տալիս յթի որքան հարգված էին հայերը Եղիպտացոց աչքում:

Ալայա քաղաքը գտնվում է Կիլիկիայի արևմտյան ծովափին, Պամիկիլիայի հարավային մասում, Ատալիայի ծոցում: Այս տեղը մի մեծ հրվանդան է, որ բաժանում է Պամիկիլիան Քարային Կիլիկիայից: Բնության հոյակապ կառուցվածքը, միացած մարդկային ճարտարության հետ՝ ստեղծել է մի անժատչելի ամրություն: Հին ժամանակ կոչվում էր Կոռակիսին, որ անշուշտ հուն. կօրա, կօրակոս «ագուավ» բառից է և նշանակում է իրր թե «ագուավաբերդ»: Իրոք որ միայն ծովային ագուավները կարող են թառել ծովի մեջ կարկառած այս ամենի քարածայուերի գլխին:

Հայտնի չե թե Քրիստոսից քանի դար առաջ հիմնվեց այս բերդաքաղաքը: Գիտենք որ Սելեկյանց Անտիոքոս թագավորը պաշարեց այն, բայց չկարողացավ գրավել: Հոռվմայեցոց պետություն ժամանակ ծովահենների բունը դարձավ: Պոմպեոս Ա.թ. 65 թվին խորտակեց նրանց ուժը այս ժայռերի առաջ. 10,000 հոգի ընկան կովում, 20,000 հոգի գերի տարբեցան, 1200 նավ կործանվեց և 120 նավակայան նվաճվեց: Յամաքի վրա 400 ամրոց կար, որոնց մեծ մասը գրավվեց, մնացածը բարբարոսների ձեռքը մնաց:

Միջին դարում Կոռակեսիոնը կոչվում էր Candelor, Calandros, Scalandros, Castel Ubaldo կամ Baldo անուններով: Կիլիկիան թագավորության ժամանակ հայերը կոչում էին Կալրնոռոս, որ հունարեն նշանակում է «գեղեցիկ լեռ»: Լեռն Բ նվաճեց այս տեղերը և ժառանգություն տվեց Սիր Ատանին, որով այդ շրջանը կոչվեց «Աշխարհ Սիր Ատանայ», իլոնիայի Սուլթանը Ալայեղդին, գրավեց այդ բերդը Սիր Ատանի թոռան ձեռքից և մի նոր քաղաք շինելով՝ իր անունով կոչեց Ալայեղդին: Այս բառից կրծատամբ առաջացավ Ալայտ անունը:

Ալայտ քաղաքի նկարագրությունը, հրվանդանի հա-

տակագիծը, ինչպես նաև քաղաքի երեք չքնաղ տեսարաններ տես Ալիշանի Սիսուանում, էջ 311—316:

Վերը էջ 17, իբն-ի Բատուտան հիշատակում է մահմետական կրոնի մի քանի դավանանքներ. սրանց բացատրությունը տալ մենք ավելորդ ենք համարում:

Անթալիա քաղաքը, որ հիշատակում է իբն-ի Բատուտան, մեր մեջ ընդհանրապես կոչվում է Ատալիտ: Գտնվում է Կիլիկիայի արևմտյան ծայրը, Ատալիո ծոցի խորքում: Պամփիւլիայի մայրաքաղաքն է: Այս քաղաքը շինել է Ն.թ. երկրորդ դարի կեսին, Պերգամայի թագավոր Ատալիոս Բեղրայրասեր, որի անունով էլ կոչվել է: Ն.թ. 132 թ. Հռովմայիցիք գրավեցին և Պամփիւլիայի մայրաքաղաք դարձրին: Այստեղ ապաստանեց Պոմպեոս՝ Փարսալայի պարտությունից հետո՝ 48 թ:—Իկոնիայի Դիմ-Ասլան սուլթանը գրավեց այս քաղաքը 1207 թ. Հռոյների ձեռքից: Այս միջոցին Կիլիկիո Լիոն Բ թագավորը գրավեց այս ծովեղերքը՝ «մինչև յԱտալիա». բայց հայտնի չէ թե ինքը կամ իր հաշորդները նաև Ատալիա քաղաքը գրավել են: Իկոնիայի սուլթանության անկումից հետո՝ Ատալիան անցավ Կարամաններին, որոնց ձեռքն էր իբն-ի Բատուտայի ժամանակ: ԺԵ գարի կեսին՝ Կարամաններից անցավ Օսմանցոց, որոնց ձեռքն է մինչև այժմ:—Ատալիայի մասին ավելի ընդարձակ տեղեկություններ, ինչպես նաև քաղաքի նկարը տես Ալիշանի Սիսուանում, էջ 302—5:

Արարերեն հրատարակության 260—265 էջերում հետինակը խոսում է Ալ-Խալիլար ալ-Ֆիրիան «Երիտասարդաների եղբայրություն» միության մասին:—Այս միությունը տարածված է ամբողջ Փոքր-Ասիայում, ամեն քաղաք, ամեն դյուզ, ուր որ թուրքման կա: Միության անդամները կոչվում են ալ-Խալիլ (եղբայր) կամ ֆարա (երիտասարդ). ապառում են համայնական կյանքով, իրար հետ միասին, ամուսի են: Երանք ընտրում են մի գլխավոր՝ իբենց արհեստակիցներից, նա շինում է մի վանք, զարդարում գորգերով ու կարասիքով. անդամները աշխատում են ամրող օրը և

իբենց ամրող շահածը բերում հանձնում են իբենց գլխավորին: Գլխավորը այդ գործարով գնում է իբենց բոլոր պետքերը, միասին ուտում և ապրում են: Արգարության պաշտպան, անիբավության հակառակորդ և չափազանց հյուրասեր են: Եթե պատահի մի հյուր, մի պանդուխտ կամ մի ճանապարհորդ, պահում են իբենց մոտ և նրա բոլոր պետքերը հոգում: Իբենց հասարակաց ճաշից հետո՝ երգում ու պարում են: Ունին առանձին տարազ և կրում են մի տեսակ բարձր գլխարկի: Այսպիսի միություններից մեկը, օրինակ, կոշկակարների միությունն էր, որ ուներ 200 անդամ:

Իբն-ի Բատուտայի այս հատվածը մենք չթարգմանեցինք և բավականանում ենք միայն այս տեղեկությամբ:

11

Սեբաստիան հին ժամանակ կապադովիայի թագավորության մասն էր և կոչվում էր Կապարա. Պոմպեոսը նըմանեց այս քաղաքը և շատ ծաղկեցրեց. կոչվեց նոր պնունով Թեոսուպալիս: Պոնտոսի Պոլմոն թագավորի կենը՝ Պիւթոպորիս տիրանալով այս քաղաքին՝ ի պատիվ Հռովմայեցոց Օքոստոս Սեբաստոս կայսեր՝ վերակոչեց Սեբաստիա: Թեոլոս Ա. կայսեր ժամանակ այս շրջանը կազմեց Առաջին Հայք հահանգը, որի մայրաքաղաքն էր Սեբաստիա քաղաքը: Յուստինիանոս 536 թվին նույն շրջանը կոչեց Երկրորդ Հայք, որի կուսակալանիստ մայրաքաղաքն էր Սեբաստիա: Խոսրով նույնիրվան 575 թվին առավ Սեբաստիան ու այրեց: Արարեների ժամանակ, այս շրջանը՝ իրեն ավելի հեռու ընկած մի վայր, խաղաղ մնաց, որով և շատ փախստական հայերի գաղթավայրը դարձավ: Ժ դարում Սեբաստիայի շրջանը գրեթե կես առ կես հայ ընակչություն ուներ: 1021 թ. Տուղրիլ բեկի արշանքներից վախեցած՝ վասպուրականի Սենեքերիմ թագավորը իր գերզաւտանով ու ժողովրդով գաղթեց այս երկիրը և հունաց կայ-

սեր հովանավորության տակ վասար իշխանություն հաստատեց:

1060 թվին Տուղրիլ արշավեց Սեբաստիայի վրա. հույները և հայերը չկարողացան դիմանալ նրա զորության, քաղաքը գրավեց, այրվեց և ավերակ դարձավ:

1100 թվին մի հայ իշխան Պարսկաստան գնաց և մահմետականություն ընդունելով՝ Սեբաստիայի և շրջակայքի վրա սուլթան նշանակվեց՝ Դանիշման տիտղոսով: Այդ օրվանից է սկսվում Դանիշմանների փառավոր հարըստությունը: 1202 թվին Սեբաստիան մտավ Կեսարիայի Սուլթան Ռուքնադղինի իշխանության տակ: 1243 թ. թաթարների Բաչու զորավարը գրավեց Սեբաստիան, բայց քաղաքին վնաս չհասցըց: Այս ժամանակ հայերը մեծ քաղաքությամբ տարածված էին Սեբաստիա, Ամասիա, Ծամնդավ, Եւգոկիա, Զիլի և Մարսվան:

ԺԴ գարում (իբն-ի Բատուտայի ժամանակն է), Կեսարիա, Եւգոկիա, Սեբաստիա, Ամասիա, Սինոպ փոքրիկ անկախ իշխանություններ էին՝ Իկոնիայի սուլթան Ալայերդինի ընդհանուր գերիշխանության տակ: Հայերը ծառայում էին նրա բանակում: Կեսարիայի թագավորն էր այդ միջոցին էրքինա:

Սրբանք են իբն-ի Բատուտայի այստեղ հիշած անձերը:

12

Սենեքերիմ թագավորը Սեբաստիայում շինել էր մի գեղեցիկ ապարանք, մարմար քարերով ու քերովբեածե քանդակներով զարդարված, նուրբ և սքանչելի փորագրություններով, ընդարձակ մի սրահով, որի երկու կողմերը սյունազարդ կամարների տակ ութական սենյակներ կան և մեջտեղը մի ընդարձակ պարտեզ: Այս շենքը այժմ տաճական ուսումնարան է և կոչվում է Gök medrese.

Հավանաբար իբն-ի Բատուտայի հիշած Դարասության ամառ այս շենքն է:

13

Ամասիա քաղաքը գտնվում է Սեբաստիայի և Սամսոնի միջև. պատկանում է Պոնտոսին: Այստեղ է ծնվել Ստրաբոն պատմիչը ն.թ. 63 թվին: Նախ գտնվում էր Միհրդատի իշխանության տակ. Պոմպեոսը գրավեց և քաղաքը Հռովմայեցոց և ապա Հռովմայ իշխանության տակ մտավ: 1064 թվին, Կարսի Գաղեկ թագավորը իր իշխանությունը փոխանակելով Փոքր-Հայքի մի մասի հետ, Ծամնդաւի հետ ստացավ նաև Ամասիան և ուրիշ քաղաքներ: Հայերը այդ ժամանակ այնպիս շատացան, որ կազմեցին առանձին և պիսկոպոսական աթոռ և 1307 թվին Սուռմ գումարված ժողովին ներկա է նաև Գեորգ եպիսկոպոս Ամասիո:

ԺԴ գարում, իբն-ի Բատուտայի ճանապարհորդության ժամանակ, ինչպես քիչ առաջ էլ ասացինք, Սեբաստիայի, Սինոպի և Եւգոկիայի նման, Ամասիան էլ կազմում էր փոքրիկ անկախ իշխանություն՝ Իկոնիայի սուլթան՝ Ալայերդինի ընդհանուր գերիշխանության տակ:

14

Իբն-ի Բատուտայի հիշած Գումուշն է արդի Գումուշ խանա (Gümüşxane) քաղաքը, որ գտնվում է Տրապիզոնից հարավ-արևելքի լեռների մեջ: Համաշխարհային պատերազմից առաջ ուներ 1000 տուն ընակիչ՝ տաճիկ, հույն և հայ: Թաղաքի շուրջը կան անվերջ ու ընդարձակ պարտեզներ, որոնց մեջ անվանի է մանավանդ խնձորն ու տանձը, որ տեղացոց շատերի միակ ապրուստն է: Այստեղ կան նաև արձաթի հանքեր, բայց չեն շահագործվում: Շրջակա ընակիները առնասարակ կոչվում են խալդ և հին Խալդերի շարունակությունն են համարվում:

Երկու օրվա ճամբար հեռու գտնված այն բարձր ու սեպ սարերը, ուր չի գնացել իբն-ի Բատուտան, այժմ Կօլատ-Դայ կոչված լեռներն են:

Բայսուս բառով պետք է հասկանալ Փիսուս (արաբերեն վի չկա. և փոխանակվում է թ կամ ֆ ձայնով): Իսկ Փիսուս պարսկերեն բառ է, որ նշանակում է «աշտանակ»: Ծագում է պրս. փիս «ճարպ» և սուզ «այրել» բառերից: Դործածական է նաև Մշո բարբառում և Սալմաստում (վերջինս փաստ ձևով):

Արաբերեն բնագըի 263-րդ էջում, իբն-ի Բատուտան նկարագրում է փիսուսը: Դա մի պղնձյա աշտանակ է, երեք տաքով, ծայրին կա պղնձե ճրագ, մեջտեղը պատրույզի խողովակը. ճրագը լցված է հալած ճարպով. կողքին էլ կան պատրույզը շտկելու մկրատները. եղբայրներից մեկը, որ կոչում է չիրաղչի (ճրագ վասող) զբաղված է հատկապես պատրույզը սարքելու գործով:

Մինչեւ այսօր էլ նշանավոր է երգնկան իր պղնձի հանքերով, պղնձագործությամբ և հատկապես մեծ, մարդահասակ ու գեղեցիկ պղնձյա աշտանակներով:

Արաբերեն բնագրում (էջ 294) այս բառը գրված էր յ տառով՝ փոխանակված. պահեցինք անփոփոխ:

Կարինում (Արգրում) խաղող չի աճում՝ տեղի բարձրության պատճառով: Կան շատ բանջարանոցներ, բայց պարտեղ չկա: Բարձրահասակ անպտուղ ծառեր գտնվում են միայն Հայոց գերեզմանատնում: Զարմանալի է որ իբն-ի Բատուտան ծառեր և մանավանդ խաղողի որթեր է տեսել Կարինում:

Այստեղ «երիտասարդ» բառը այն մտքով է, որ բացատրեցինք էջ 40:

ՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՌԻՆՆԵՐԻ

(էջ 5—33)

(Հայոց պատմության վերաբերյալ անունները շեղատառ են)

- Արու Արգառուահիմ Արդառուահման՝ որդի Մուստաֆայի աշակերտ Թաջէղդին երրիքայիի, շեյխ Երուսաղեմի 7.
- Արու Հանիփա իմամ 15—17.
- Արու Սաւիդ՝ սուլթան Իրակի 13.
- Արու Արբաս Ահմադ Առոփիֆայի՝ Սունուսացի 29.
- Աթարենք սուլթան 27.
- Ալա-էդ-դին, որդի Սարիմ-էդ-դինի, Բուղրաս բերդի էմիրի 9.
- Ալաէդին սուլթան Ռումի 17.
- Ալաէդին Արթենա էմիր Ռումի 27, 31.
- Ալայա բղ. Ռումի 13, 17.
- Ալեքսանդրիա քղ. Եգիպտոսի 17.
- Ալժիր 5.
- Ալի մարգարե 11
- Ալի շեյխ Սունուսայի 29.
- Ահմադ բիչաքչի, եղբայր, Սիկասցի 25.
- Ամասիա քղ. Փոքր-Ասիայի 27.
- Անքալիս (Ատալիս) քղ. Կիլիկիայի 19, 23.
- Անթաքիա (Անտիոք) քղ. Սիրիայի 19.
- Առուաջինանի, որդի Ալաէդինի, Ալայացի 17.
- Առուիլաք (le caravansérail) 29.
- Առոփիֆայի սաջջաղա 29.
- Առիական ընկերություն 5.
- Ասորիք (տես և Սիրիա) 5, 17.
- Արաբական ծոց 5.
- Արաբերեն 27.
- Արաբիա Քարային 5.
- Արգանջան (տես և Երգնկա) 31.

Արգրում 7, 11, 31 (անս և կարին).

Արշիպելագոս 33.

Ափրիկե 5.

Աֆղանիստան 5.

Բուխարա 5

Բաւդրաս բերդ՝ սահման հայոց Կիլիկիայի 9.

Բուրդուր քղ. Փոքր-Ասիայի, մոտ Այդինի 23.

Գաբրիել հրեշտակապետ 7.

Գումուշ քղ. Պոնտոսի (այժմ Գումուշիսանա) 29.

Գրանադայի թագավորությունը (Սպանիա) 5.

Դամիաթ քղ. Եգիպտոսի 17.

Դար-աս-սիյադաթ Միվասի 25.

Déférémegy 5.

Դիարբենիր 13, 33.

Դրախտ 7.

Եգիպտոս 5, 17, 21, 27.

Եվրոպա 5.

Երզնկան(ցի) 17.

Երուսաղեմ 7.

Եփրատ գետ 7.

Զանդիքար 5.

Էլակուշ սուրհանդակ 11.

Թաջէզդին էրրիֆայի ուսուցիչ 7.

Թուման եղբայր Կարնեցի 33.

Թունիս 5.

Թուրքերն 31.

Թուրքման 17, 27, 31.

Իբն-ի Բատուտա (կյանքն ու գործերը) 5.

Իբն-ի Զուզի, քարտուղար Իբն-ի Բատուտայի 5.

Իբրահիմ Շահ, որդի Էմիր Սունիթայի, տեր Մուսուլի և
Դիարբեքիրի 13.

Իբրահիմ շեյխ Սունուսայի, որդի Քուչուք շեյխ Ահմադի 29:

Իզզեդդին շեյխ Առոիվաքի 29.

Խոլամ 21.

Իրակ 5, 13, 23, 25, 27, 29, 31.

Իրակ արաբի 13.

Իրան 11.

Խիդր բեկ, որդի Յունիս բեկի, սուլթան Ատալիայի 23.

Խորասան 11.

Խփչաղի Երկիր (հարավային Ռուսաստան) 5.

Կարաման հայր Յուսուֆ բեկի՝ թագավորի Ալայայի 19.

Կահիրե քղ. Եգիպտոսի 11, 17.

Կարին բղ. 33.

Հալեր քղ. 9, 11.

Հայաստան 9.

Հայդար Հնդկաստանցի 33.

Հայեր 9, 11, 31.

Հասան շեյխ, սուլթան Իրակ Արաբի 13.

Հնդկական Արշիպելագոս 5.

Հնդկաստան 5, 33.

Հումեր 11.

Հուսամ-Էղ-զին, Էմիր Ռուսուսի 9, 11.

Հրյաներ 21.

Մալիկյան Կղզիներ 5.

Մալի քղ. Մուղանի 17.

Մալիք-ալ-Նասիր, սուլթան Եգիպտոսի 9, 11.

Մաշադ-Ալի քղ. Նաջաֆի 11.

Մաշդէզդին եղբայր, Գումուշիսանցի 29.

Մարոկ 5.

Մերդին քղ. 13.

Մեքքաս ս. քաղաք 5.

Միջազետք 5.

Մծբին բղ. 13.

Մուհամմեդ մարզարե 7, 25.

Մուլիմաններ 11, 31.

Մուսուլ քղ. Իրակի 13.

Մուստաֆա հայր Արու Արդառուահիմ Արդառուահմանի՝ շեյխ

Երուսաղեմի, Արզրումցի 7.

Պիտուամարտարանի Հրատարակչության
տպարան, Երևան, Աբովյան 104
Պոտ. № 784, տիրաժ 1000,
Վ.Ֆ. 1013

ՀՀ Ազգային գրադարան



NL0413885

46

ԳԻՒՇ 4 ՈՐՈՌՈՒ

8382